# 11. ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ
## JOBS

**Աշխատատեղերի մասին** տեղեկատվության աղբյուրը **10 և ավելի վարձու աշխատող** ունեցող կազմակերպություններից՝ **սկսած 2018թ.-ից**, եռամսյակային պարբերականությամբ հավաքագրվող «Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» վիճակագրական հաշվետվությունն է և տարեկան պարբերականությամբ իրականացվող ընտրանքային հետազոտությունը:

Տեղեկատվություն ներկայացնող կազմակերպությունների շրջանակը ձևավորվել է ՀՀ ՊԵԿ Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազայից՝ 2017թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ:

**Աշխատատեղերի ստորև ներկայացվող տեղեկատվության մեթոդաբանական հիմքերն են.**

- ԵՄ կանոնակարգ (ԵԽ) No 453/2008 (EU Regulation (EC) No 453/2008 OF The European Parliament and of the Council of 23 April 2008 on quarterly statistics on Community job vacancies, since 2018 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A22010D0643)
- Եվրոստատի «Թափուր աշխատատեղերի վիճակագրության մեթոդաբանություն» https://ec.europa.eu/eurostat/ramon/statmanuals/files/KS-RA-10-027-EN.pdf:

***Աշխատատեղերի թիվն*** աշխատողների **փաստացի թվաքանակի (զբաղեցված աշխատատեղերի), այդ թվում արտաքին համատեղությամբ աշխատողների և թափուր աշխատատեղերի հանրագումարն է**՝ հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

***Կրճատված աշխատատեղերի թիվը*** **աշխատատեղերի / հաստիքների կրճատումն** է հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում (օրինակ՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխում, արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատում և այլն):

***Նոր ստեղծված աշխատատեղ*** է համարվում հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանում ոչ միայն առաջին անգամ ստեղծված կազմակերպությունը, այլ նաև գործող կազմակերպությունում, օրինակ, արտադրության ընդլայնման, հերթափոխային աշխատանքների ավելացման, ինչպես նաև վերակազմավորման արդյունքում նոր / առաջին անգամ ստեղծված աշխատատեղը և այլն: Նոր ստեղծված աշխատատեղը կարող է լինել զբաղեցված կամ՝ դեռևս ոչ, բայց որում նախատեսված է ընդունել աշխատող՝ ոչ ուշ քան հաշվետու եռամսյակին հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

- ***Հարկ է նկատի ունենալ, որ նոր աշխատատեղերը կարող են ստեղծվել որոշակի ժամկետով՝ որոշակի գործունեության իրականացման համար, որի ավարտից հետո կհամարվեն կրճատված:***

***Թափուր աշխատատեղերի թիվը*** գործատուի կողմից պահանջվող աշխատողների թվաքանակն է՝ նրանց լրիվ զբաղվածությունն ապահովելու պայմանով: Թափուր աշխատատեղերի թվի մեջ ներառվում են միայն վարձատրվող թափուր պաշտոնները / հաստիքները:

***Թափուր է համարվում այն աշխատատեղը***, որը հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում զբաղեցված չի եղել և գործատուն կազմակերպության սահմաններից դուրս հարմար թեկնածու գտնելու նպատակով իրականացրել է կոնկրետ միջոցառումներ՝ անցկացրել է հարցազրույցներ, ուղղակիորեն զբաղվել է թեկնածուի ընտրությամբ, թափուր հաստիքի մասին իրազեկել կամ հայտարարություն է տարածել աշխատանքի տեղավորման պետական, մասնավոր

գործակալությունների միջոցով, զանգվածային լրատվամիջոցներով (համացանց, թերթեր, ամսագրեր, հեռուստառադիո և այլն)՝ անկախ նրանից թափուր հաստիքը զբաղեցվելու է անորոշ, թե որոշակի ժամկետով, լրիվ, թե ոչ լրիվ աշխատանքային օրով կամ շաբաթով:

- ***Թափուր է համարվում նաև*** երկարատև ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայողների, նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի հետ կապված արձակուրդում գտնվողների ժամանակավոր թափուր աշխատատեղերը, եթե դրանք փոխարինված չեն մեկ այլ աշխատողով և գործատուն իրականացրել է կոնկրետ միջոցառումներ թափուր պաշտոնի / հաստիքի համալրման համար:
- ***Թափուր չի համարվում այն աշխատատեղը.***

- որը հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում նախատեսված չի եղել համալրել.

- որի համալրման համար հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում որևէ կոնկրետ միջոցառում չի իրականացվել.

- որը թափուր է դարձել և միաժամանակ համալրվել հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում.

- որը նախատեսված է զբաղեցնել մեկ օր տևողությամբ.

- որը նախատեսված է համալրել կազմակերպության աշխատողներից՝ ներսում.

- որը զբաղեցվելու է արձակուրդից (բոլոր տեսակների) վերադարձող աշխատողի կողմից.

- որը զբաղեցվելու է քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի ներգրավմամբ.

- որի համար աշխատողի հետ պայմանագիր կնքվել է, բայց դեռևս աշխատանքը չի սկսվել:



# JOBS

The source of **information on jobs** is the quarterly statistical report and annualy conducted sample survey “On the Vacancies, Number of Payroll and Job Turnover” submitted by establishment with **at least 10 paid employees, since 2018.**

The frame of respondents has been developed from the Database of the Personal Income Tax and Social Tax (Payment), authorized by the State Revenue Committee of the Republic of Armenia (SRC RA), at the September of 2017.

**The methodological background of the information provided below is:**

- EU Regulation (EC) No 453/2008 of the European Parliament and of the Council of 23 April 2008 on quarterly statistics on Community job vacancies, since 2018 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A22010D0643
- Methodologies for Job Vacancy Statistics - Proceedings, Eurostat, https://ec.europa.eu/eurostat/ramon/statmanuals/files/KS-RA-10-027-EN.pdf:

***The number of jobs*** is the sum of the actual number of payroll employees (occupied jobs), including employees holding several jobs (external part-timers) and vacancies at the end of the reporting / observation period.

***The number of job cuts*** is the reduction in the number of jobs / payroll during the reporting /observation period (e.g. changes in output, economic, technological and work organization conditions, reduction in the number of workers due to production needs, etc.).

***Newly created jobs*** are not only the first time created during the reporting / observation period, but also the existing one, such as production expansion, shift work, as well as new / first created jobs as a result of restructuring. The newly created job may be occupied or not yet, but it is intended to hire a worker no later than one month after the reporting / observation period.

- ***It should be noted that new jobs can be created for a certain period of time to perform certain types of activities, after which they will be considered considered as a job cut.***

***The number of vacancies*** is the number of employees required / demanded by an employer ensuring theire full-time employed. Only paid vacancies / positions are included in the number of vacancies.

***A job is considered vacant*** if it is not occupied during the reporting / observation period and the employer has taken concret actions to find a suitable candidate outside the organization, conducted interviews, directly engaged in the selection of a candidate, reported on a vacancy or issued a job announcement, through the state-owned, private agencies, the mass media (internet, newspapers, magazines, TV-radio, etc.) regardless vacancy should be filled by the fixed or unfixed period, whether a part-time or full time job.

- ***A job is considered vacant*** for those who are absent due to prolonged temporary incapacity, newborn or newborn carer, as well as temporary vacancies for up to three years of child care, if not replaced by another worker or employer has implemented specific measures to fill a vacancy / position.

- ***The job is not to be considered as a vacant, if:***

  - it was not intended to be filled during the reporting/observation period;
  - no specific actions have been taken to fill it during the reporting/observation period;
  - it has become vacant and filled at the same time during the reporting/observation period;
  - it is designed to occupy for one day;
  - it is designed to recruit staff from within the organization;
  - it should be occupied by an employee returning from vacation (all types);
  - intended to be filled by a civil law contract employee;
  - a contract has been signed with the employee, but work has not started yet.

## 11.1. Թափուր աշխատատեղերն ըստ պահանջվող աշխատատեղի բնույթի և ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների
## *Job Vacancies by Job Permanency by Institutional Sectors of Economy*

| | I եռամսյակ *quarter* | | II եռամսյակ *quarter* | | III եռամսյակ *quarter* | | IV եռամսյակ *quarter* | | Միջին տարեկան *Average annual* | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2018 | 2019 | 2018 | 2019 | 2018 | 2019 | 2018 | 2019 | 2018 | 2019 | |
| Ընդամենը *Total* | | | | | | | | | | | |
| **Թափուր աշխատատեղեր,** *1 000 աշխատատեղ* | **6.9** | **8.2** | **8.2** | **7.9** | **8.2** | **7.8** | **6.0** | **8.7** | **6.6** | **9.3** | ***Job vacancies,*** *1 000 jobs* |
| անորոշ ժամկետով | 5.7 | 7.4 | 7.3 | 6.8 | 7.0 | 6.9 | 5.3 | 7.8 | 5.9 | 8.3 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 1.2 | 0.8 | 0.9 | 1.1 | 1.2 | 0.9 | 0.7 | 0.9 | 0.7 | 1.0 | *fixed period* |
| **Թափուր աշխատատեղերի մակարդակ, %** | 2.0 | 2.2 | 2.3 | 2.1 | 2.3 | 2.0 | 1.7 | 2.3 | 1.5 | 2.0 | ***Job vacancies rate, %*** |
| անորոշ ժամկետով | 1.8 | 2.2 | 2.3 | 2.0 | 2.2 | 2.0 | 1.6 | 2.3 | 1.5 | 2.0 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 3.0 | 2.1 | 2.2 | 2.9 | 3.1 | 2.3 | 1.8 | 2.4 | 1.7 | 2.2 | *fixed period* |
| Պետական *Public* | | | | | | | | | | | |
| **Թափուր աշխատատեղեր,** *1 000 աշխատատեղ* | **3.2** | 5.5 | 4.1 | 4.9 | 4.4 | 5.0 | 3.5 | 6.0 | 3.5 | **6.0** | ***Job vacancies,*** *1 000 jobs* |
| անորոշ ժամկետով | **2.8** | 4.9 | 3.5 | 4.1 | 3.9 | 4.4 | 3.0 | 5.4 | 3.1 | 5.4 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | **0.4** | 0.6 | 0.6 | 0.8 | 0.5 | 0.6 | 0.5 | 0.6 | 0.4 | 0.6 | *fixed period* |
| **Թափուր աշխատատեղերի մակարդակ, %** | **1.6** | 2.7 | 2.1 | 2.5 | 2.3 | 2.5 | 1.8 | 2.9 | 1.8 | 2.9 | ***Job vacancies rate, %*** |
| անորոշ ժամկետով | **1.6** | 2.7 | 2.2 | 2.4 | 2.3 | 2.5 | 1.8 | 3.0 | 1.8 | 3.0 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 1.7 | 2.3 | 2.5 | 3.2 | 2.0 | 2.6 | 2.0 | 2.5 | 2.0 | 2.5 | *fixed period* |
| Ոչ պետական *Non-public* | | | | | | | | | | | |
| **Թափուր աշխատատեղեր,** *1 000 աշխատատեղ* | **3.7** | 2.7 | 4.1 | 3.1 | 3.8 | 2.8 | 1.5 | 2.7 | 3.1 | **3.3** | ***Job vacancies,*** *1 000 jobs* |
| անորոշ ժամկետով | **2.9** | 2.5 | 3.8 | 2.7 | 3.1 | 2.5 | 1.3 | 2.4 | 2.8 | 2.9 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | **0.8** | 0.2 | 0.3 | 0.4 | 0.7 | 0.3 | 2.0 | 0.3 | 0.3 | 0.4 | *fixed period* |
| **Թափուր աշխատատեղերի մակարդակ, %** | **2.3** | 1.6 | 2.5 | 1.7 | 2.4 | 1.6 | 2.5 | 1.5 | 1.3 | 1.3 | ***Job vacancies rate, %*** |
| անորոշ ժամկետով | **2.0** | 1.6 | 2.5 | 1.7 | 2.1 | 1.5 | 2.1 | 1.6 | 1.3 | 1.2 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 5.4 | 1.7 | 1.7 | 2.5 | 4.7 | 2.0 | 1.5 | 2.2 | 1.4 | 1.9 | *fixed period* |

## 11.2. Նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերի թիվն[1] ըստ աշխատատեղի բնույթի և ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների

## *Newly Created and Cutted Jobs by Job Permanency by Institutional Sectors of Economy*

1 000 աշխատատեղ
*job*

| | I եռամսյակ *quarter* | | II եռամսյակ *quarter* | | III եռամսյակ *quarter* | | IV եռամսյակ *quarter* | | Միջին տարեկան *Average annual* | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2018 | 2019 | 2018 | 2019 | 2018 | 2019 | 2018 | 2019 | 2018 | 2019 | |
| Ընդամենը *Total* | | | | | | | | | | | |
| ***Նոր ստեղծված աշխատատեղեր*** | **5.1** | **8.5** | **10.9** | **11.5** | **9.9** | **13.0** | **8.1** | **11.6** | **34.0** | **43.7** | ***Newly created jobs*** |
| *ստեղծված* | | | | | | | | | | | *created for:* |
| անորոշ ժամկետով | 3.9 | 6.5 | 8.6 | 8.9 | 7.2 | 10.6 | 5.7 | 9.5 | 25.4 | 34.7 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 1.2 | 2.0 | 2.3 | 2.6 | 2.7 | 2.4 | 2.4 | 2.1 | 8.6 | 9.0 | *fixed period* |
| **Կրճատված աշխատատեղեր** | **3.9** | **9.5** | **5.3** | **9.1** | **9.8** | **10.2** | **9.2** | **12.0** | **28.2** | **39.9** | ***Job cuts*** |
| *ստեղծված* | | | | | | | | | | | *Created for:* |
| անորոշ ժամկետով | 3.0 | 8.2 | 3.7 | 6.8 | 8.0 | 8.4 | 5.5 | 9.2 | 20.2 | 31.7 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 0.9 | 1.3 | 1.6 | 2.3 | 1.8 | 1.8 | 3.7 | 2.8 | 8.0 | 8.2 | *fixed period* |
| Պետական *Public* | | | | | | | | | | | |
| ***Նոր ստեղծված աշխատատեղեր*** | **1.1** | **2.5** | **1.5** | **2.7** | **3.0** | **3.4** | **3.1** | **3.1** | **8.7** | **10.9** | ***Newly created jobs*** |
| *ստեղծված* | | | | | | | | | | | *created for:* |
| անորոշ ժամկետով | 0.6 | 1.7 | 0.9 | 1.8 | 2.1 | 2.2 | 1.4 | 1.8 | 5.0 | 6.8 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 0.5 | 0.8 | 0.6 | 0.9 | 0.9 | 1.2 | 1.7 | 1.3 | 3.7 | 4.1 | *fixed period* |
| **Կրճատված աշխատատեղեր** | **1.5** | **2.7** | **1.9** | **4.3** | **2.2** | **2.9** | **2.9** | **3.2** | **8.5** | **12.2** | ***Job cuts*** |
| *ստեղծված* | | | | | | | | | | | *Created for:* |
| անորոշ ժամկետով | 0.9 | 1.8 | 1.0 | 2.8 | 1.4 | 2.2 | 1.4 | 1.9 | 4.7 | 8.0 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 0.6 | 0.9 | 0.9 | 1.5 | 0.8 | 0.7 | 1.5 | 1.3 | 3.8 | 4.2 | *fixed period* |
| Ոչ պետական *Non-public* | | | | | | | | | | | |
| ***Նոր ստեղծված աշխատատեղեր*** | **4.0** | **6.0** | **9.4** | **8.8** | **6.9** | **9.6** | **5.0** | **8.4** | **25.3** | **32.8** | ***Newly created jobs*** |
| *ստեղծված* | | | | | | | | | | | *created for:* |
| անորոշ ժամկետով | 3.3 | 4.8 | 7.7 | 7.1 | 5.1 | 8.4 | 4.3 | 7.7 | 20.4 | 28.0 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 0.7 | 1.2 | 1.7 | 1.7 | 1.8 | 1.2 | 0.7 | 0.7 | 4.9 | 4.8 | *fixed period* |
| **Կրճատված աշխատատեղեր** | **2.4** | **6.8** | **3.4** | **4.8** | **7.6** | **7.3** | **6.3** | **8.8** | **19.7** | **27.7** | ***Job cuts*** |
| *ստեղծված* | | | | | | | | | | | *Created for:* |
| անորոշ ժամկետով | 2.1 | 6.3 | 2.7 | 4.0 | 6.6 | 6.2 | 4.0 | 7.2 | 15.4 | 23.7 | *unfixed period* |
| որոշակի ժամկետով | 0.3 | 0.5 | 0.7 | 0.8 | 1.0 | 1.1 | 2.3 | 1.6 | 4.3 | 4.0 | *fixed period* |

[1] Այստեղ և հետայսու՝ նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերի վերաբերյալ ցուցանիշներում ներառված չեն ընտրանքային հետազոտության արդյունքները:
*Here and hereafter- In the indicators on newly created and cutted jobs are not included results of sample survey.*

## 11.3. Թափուր, նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերն ըստ պահանջվող աշխատատեղի բնույթի

## *Job Vacancies, Newly Created and Cutted Jobs by Job Permanency*

1 000 աշխատատեղ
*job*

| ՏԳՏԴ (խմբ.2) *NACE (rev.2)* | | Թափուր աշխատատեղեր, *Job vacancies* | | Նոր ստեղծված աշխատատեղեր *Newly created jobs* | | Կրճատված աշխատատեղեր *Job cuts* | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2018 | 2019 | 2018 | 2019 | 2018 | 2019 | |
| **A-U** | ***Ընդամենը*** | ***6.6*** | ***9.3*** | ***34.0*** | ***43.7*** | ***28.2*** | ***39.9*** | ***Total*** |
| A | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն | 0.0 | 0.1 | 1.4 | 1.3 | 2.0 | 1.3 | *Agriculture, forestry and fishing* |
| B | Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում | 0.1 | 0.1 | 0.9 | 1.0 | 1.3 | 0.7 | *Mining and quarrying* |
| C | Մշակող արդյունաբերություն | 0.4 | 0.4 | 8.3 | 6.3 | 5.6 | 6.6 | *Manufacturing* |
| D | Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում | 0.2 | 0.3 | 0.5 | 1.4 | 0.5 | 1.5 | *Electricity, gas, steam and air conditioning supply* |
| E | Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում | 0.2 | 0.3 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | *Water supply; sewerage, waste management and remediation activities* |
| F | Շինարարություն | 0.2 | 0.1 | 2.7 | 3.0 | 2.7 | 3.0 | *Construction* |
| G | Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում | 0.1 | 0.2 | 4.4 | 9.5 | 2.2 | 8.0 | *Wholesale and retail trade; repair of motor vehicles and motorcycles* |
| H | Փոխադրումներ և պահեստային տնտեսություն | 0.4 | 0.1 | 1.0 | 0.7 | 0.9 | 0.4 | *Transportation and storage* |
| I | Կացության և հանրային սննդի կազմակերպում | 0.1 | 0.1 | 0.8 | 2.1 | 1.1 | 1.7 | *Accommodation and food service activities* |
| J | Տեղեկատվություն և կապ | 0.6 | 0.3 | 1.1 | 1.0 | 0.4 | 0.4 | *Information and communication* |
| K | Ֆինանսական և ապահովագրական գործունեություն | 0.9 | 1.1 | 1.2 | 1.5 | 1.0 | 0.7 | *Financial and insurance activities* |
| L | Անշարժ գույքի հետ կապված գործունեություն | 0.0 | 0.0 | 0.3 | 0.2 | 0.2 | 0.4 | *Real estate activities* |
| M | Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն | 0.3 | 0.4 | 0.3 | 0.6 | 0.4 | 0.5 | *Professional, scientific and technical activities* |
| N | Վարչարարական և օժանդակ գործունեություն | 0.2 | 0.2 | 1.0 | 1.4 | 0.7 | 1.7 | *Administrative and support service activities* |
| O | Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն | 1.5 | 3.8 | 1.1 | 1.4 | 1.2 | 2.4 | *Public administration and defence; compulsory social security* |
| P | Կրթություն | 0.6 | 0.8 | 5.6 | 7.9 | 5.3 | 7.6 | *Education* |
| Q | Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | 0.5 | 0.5 | 1.0 | 1.6 | 1.0 | 1.4 | *Human health and social work activities* |
| R | Մշակույթ, զվարճություններ և հանգիստ | 0.2 | 0.4 | 1.8 | 2.0 | 1.4 | 0.9 | *Arts, entertainment and recreation* |
| S | Սպասարկման այլ ծառայություններ | 0.0 | 0.1 | 0.3 | 0.4 | 0.2 | 0.4 | *Other service activities* |

## 11.4. Թափուր, նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերն ըստ պահանջվող աշխատատեղի բնույթի, ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի
## *Job Vacancies, Newly Created and Cutted Jobs by Job Permanency by RA Marzes and Yerevan city*

| | Թափուր աշխատատեղեր, *Job vacancies* | | Նոր ստեղծված աշխատատեղեր *Newly created jobs* | | Կրճատված աշխատատեղեր *Job cuts* | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2018 | 2019 | 2018 | 2019 | 2018 | 2019 | |
| | | | 1 000 աշխատատեղ *job* | | | | |
| ***Ընդամենը*** | ***6.6*** | ***9.3*** | ***34.0*** | ***43.7*** | ***28.2*** | ***39.9*** | ***Total*** |
| ք. Երևան | 4.1 | 6.7 | 18.8 | 30.6 | 13.8 | 26.0 | *Yerevan city* |
| Արագածոտն | 0.2 | 0.2 | 0.5 | 0.7 | 0.6 | 0.8 | *Aragatsotn* |
| Արարատ | 0.3 | 0.2 | 2.7 | 1.9 | 1.2 | 1.3 | *Ararat* |
| Արմավիր | 0.2 | 0.2 | 1.5 | 1.3 | 1.7 | 1.0 | *Armavir* |
| Գեղարքունիք | 0.2 | 0.2 | 0.8 | 0.8 | 0.6 | 0.6 | *Gegharkunik* |
| Լոռի | 0.4 | 0.5 | 2.4 | 1.6 | 4.7 | 4.2 | *Lori* |
| Կոտայք | 0.3 | 0.5 | 2.7 | 2.3 | 1.9 | 2.3 | *Kotayk* |
| Շիրակ | 0.3 | 0.3 | 1.0 | 1.3 | 1.0 | 1.3 | *Shirak* |
| Սյունիք | 0.3 | 0.3 | 1.4 | 1.5 | 1.0 | 1.0 | *Syunik* |
| Վայոց ձոր | 0.1 | 0.1 | 0.6 | 0.5 | 0.5 | 0.5 | *Vayots Dzor* |
| Տավուշ | 0.2 | 0.2 | 1.7 | 1.1 | 1.0 | 1.0 | *Tavush* |

